

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԱԼԵՐԱԿՆԵՐԻ ՄԷջ

Օ՛ փրլատակներ , սեւ աւերակնե՛ր ,
Երազ օրերի ախուր վկանե՛ր .
Ասացէ՛ք՝ Ու՞ր է մեր փառքը նախկին ,
Ու՞ր է Շիրակի մեր հին թագուհին :

Ո՞վ զրկեց նորան գահից հարազատ ,
Տապալեց մահւան մոայլ խորխորատ .
Ո՞ր անդութ ձեռքը խորտակեց խոպառ
Հայի որրանըն այս հըրաշափառ :

Ու՞ր են վաղեմի շքեղ պալատներ
Ու քանդակազարդ մեր սուրբ տաճարներ .
Մի՞թէ միշտ նոքա կը մնան կործան ,
Կը մնան , իբրեւ փառքի մահարձան . . .

Բայց , աւերակնե՛ր , Ե՞ր չէք բարբառում ,
Սղւոր պօէտին է՞ր չէք ըսփոփում .
Օ՛ , մի՞թէ մոայլ փլատակների մէջ
Բուերը պիտի միշտ ձայնեն անվերջ . . .

ՅԱՐՈՒԹԻՒՆ , ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

23/VII , 1901 թ .

Անի .

ՅՈՒՍԱՂԱՏ

Երբեմն հոգիս կը վրդովին
Կեանքի անվերջ հոգն ու տանջանք ,
Կը վհատիմ , ա՛հ , այն ատեն ,
Ու կը քաշուիմ խորչ մը մինակ .

Կը խոկամ հոն լո՛ւռ , յուսահա՛տ .
Աեւ խորհուրդներ միմութեան մէջ .
Կը պաշարեն հոգիս հիւանդ . . .
Ու կը ցանկամ տալ կեանքիս վերջ :

Բայց կը յիշեմ յանկարծ որ նա
Զի պատկանիր ալ ինձ բնաւին ,
Քանի որ վաղ զայն խոստացայ
Հայրենիքին իմ թանկագին :

ԶԱՏԻԿ